ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

1.1 «Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է քիմիական նյութերի գործածության անվտանգության ապահովման իրավական հիմքի բացակայությամբ:

«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի կոնվենցիայով ստանձնած պարտավորություններից, ինչպես նաև «Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի 06.05.2009 թ. ՆԿ-68-Ա կարգադրությունից, ՀՀ կառավարության «Մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» 02.12.2004թ. N1840-Ն որոշումից, «Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության գործողությունների երկրորդ ազգային ծրագրին հավանություն տալու մասին» 14.08.2008թ. N33 և «Հայաստանի Հանրապետությունում «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման գործողությունների ազգային ծրագրի 2005-2010 թվականներին իրականացվելիք միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» 13.01.2005թ. N1 և «Հայաստանի Հանրապետությունում

«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման գործողությունների ազգային ծրագրի 2016-2020 թվականներին իրականացվելիք միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» 08.12.2016թ. N49-7 արձանագրային որոշումներից, ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N1902-Լ որոշման 1-ին հավելվածի «Շրջակա միջավայրի նախարարություն» գլխի 7-րդ բաժնի 1-ին կետով սահմանված միջոցառման կատարման անհրաժեշտությունից, ինչի կատարման ժամկետ սահմանված է 2023 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակը:

«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագծի բովանդակությունը համապատասխանում է քիմիական նյութերի կառավարման բնագավառում ձևավորված քաղաքականությանը և համահունչ է «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի և «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի կոնվենցիաների հիմնադրույթներին:

Քիմիական նյութերի գործածության ոլորտը բազմասեկտորալ է և դրանց կառավարման հետ կապված հարցերը Հայաստանի Հանրապետությունում կանոնակարգվում են բազմաթիվ օրենքներով և այլ իրավական ակտերով: Միևնույն ժամանակ, այդ իրավական ակտերի առկայությունը բավարար չէ, քանի որ քիմիական նյութերի անվտանգ գործածության համար բացակայում են «Քիմիական նյութերի մասին» օրենքը, ինչպես նաև քիմիական նյութերի գործածության անվտանգության ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմներ սահմանող ենթաօրենսդրական ակտերը:

1.2 «Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագծում ընդգրկված են քիմիական նյութերի կառավարման վերաբերյալ Եվրոպական միության համապատասխան իրավական ակտերի դրույթները, իսկ գրանցման համակարգը, որը պետք է միասնական լինի ԵԱՏՄ անդամ պետությունների համար, ներկայումս գտնվում է քննարկման և լրամշակման փուլում, ուստի այդ մասով «Քիմիական նյութերի մասին» օրենքում

համապատասխան լրացումները կկատարվեն «Քիմիական արտադրանքի անվտանգության մասին» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը լրամշակելուց հետո:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Ներկայացված օրինագծով կարգավորման առարկան Հայաստանի Հանրապետության տարածքում քիմիական նյութերի գործածության՝ արտադրության, օգտագործման, պահման, փոխադրման, իրացման, ներմուծման և արտահանման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության և մարդու առողջության անվտանգության ապահովման հետ կապված հարցերն են:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագիծը մշակվել է շրջակա միջավայրի նախարարության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Սույն օրենքով քիմիական նյութերին և դրանց գործածության փուլերին ներկայացվող անվտանգության պահանջների, ինչպես նաև քիմիական նյութերի անվտանգության ոլորտում տարբեր պետական կառավարման մարմինների լիազորությունների ամրագրումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի գործածության հետ կապված հարաբերությունների կարգավորմանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր վնասակար ազդեցության նվազեցմանն ու անվտանգության ապահովմանը:

5. Տեղեկատվություն լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին

«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չկա և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն նախատեսվում:

6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ

«Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագծի մշակումն ուղղված է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N1902-Լ որոշման 1-ին հավելվածի «Շրջակա միջավայրի նախարարություն» գլխի 7-րդ բաժնով սահմանված «Քիմիական նյութերի էկոլոգիապես անվտանգ կառավարման համակարգի ստեղծումը» նպատակի կատարման համար 1-ին կետով սահմանված «Քիմիական նյութերի մասին» օրենքի և ենթաօրենսդրական իրավական ակտերի նախագծերի մշակումը և Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը» միջոցառման իրականացման ապահովմանը: